ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 **թվական**

Երևան, 2018թ.

Արտաքին շուկաների դիվերսիֆիկացիա և մատչելիության բարձրացում

- Ավարտվել են «ԵԱՏՄ անդամ երկրների և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» և «ԵԱՏՄ անդամ պետությունների և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրերի շուրջ բանակցային փուլերը: Համաձայնագրերը ներկայացվել են ԵԱՏՄ անդամ պետությունների ներպետական համաձայնեցմանը: Սերբիայի, Իսրայելի, Հնդկաստանի, Եգիպտոսի և Սինգապուրի հետ համաձայնագրերը բանակցային տարբեր փուլերում են:
- Հստակեցվել և ամրագրվել են ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգ» (REX) ինքնահավաստագրման էլեկտրոնային համակարգի շրջանակներում գրանցում և վարչական համագործակցություն իրականացնող պատասխանատու մարմինները՝ ապահովելով համակարգի ներդրման գործընթացը: Ամփոփվում է REX-ի կիրարկման իրավական շրջանակը՝ համակարգի մեկնարկն իրականացնելու նպատակով:

Արտահանման զարգացման ենթակառուցվածքներ

- ՌԴ շուկայում հայկական ծագման ապրանքների վաճառքի խթանման և աջակցության նպատակով ներդրվել և շահագործվում է «Armzon» էլեկտրոնային առևտրի հարթակը: Կայքում ներկայացված է հայկական ծագման ապրանքների գրեթե ողջ տեսականին՝ մոտ 2000 արտադրողի 10000 անուն ապրանքատեսակներ, այդ թվում՝ սննդամթերք, հագուստ, արվեստի գործեր և այլն: Armzon.am կայքում իրենց արտադրանքը կարող են ներկայացնել ինչպես խոշոր, այնպես էլ՝ փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտները:
- Ընտրված 5 թիրախային շուկաների (ԱՄԷ, Չինաստան, ԱՄՆ, Իրան, Կատար) մասով մշակվել են արտահանողների համար անհրաժեշտ տեղեկատվական փաթեթները և ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը:
- Երկակի և ռազմական նշանակության ապրանքատեսակների արտահանման և ներմուծման գործընթացը դյուրացնելու նպատակով «Էն ՓԻ ՍԻ» ՍՊԸ-ն համատեղ քննարկումների արդյունքում մշակվել է նախկինում փորձաքննություն անցած ապրանքատեսակների շտեմարան, որն ընդգրկում է ավելի քան 13.000 ապրանքատեսակ: Շտեմարանը հնարավորություն է տալիս կայքում գրանցված տնտեսվարողներին գտնել իրենց կողմից ներմուծվող և արտահանվող ապրանքները ցանկում և չանցնել կրկնակի փորձաքննություն՝ տնտեսելով ժամանակ և ֆինանսական միջոցներ: Աշխատանքներ են նաև տարվում էլեկտրոնային համակարգը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի «Մեկ պատուհան» համակարգին միացնելու ուղղությամբ:
- Ներդրվել է ծագման երկրի հավաստագրի ստացման մշտական անվանացանկի մեխանիզմը, որի դեպքում մշտական անվանացանկի համար փորձաքննություն է իրականացվում մեկ անգամ և անժամկետ: Կազմակերպվել են սեմինար-քննարկումներ բիզնեսի ներկայացուցիչների հետ, որի ժամանակ ներկայացվել են մշտական անվանացանկից օգտվելու ընթացակարգերը:
- Չինաստանում նշանակվել է ՀՀ առևտրական կցորդ, իսկ Ավստրիայում, Թուրքմենստանում և Շվեյցարիայում՝ ՀՀ առևտրական ներկայացուցիչներ:
- Չինաստանի Ցինտաո քաղաքում բացվել է ՀՀ համագործակցության գրասենյակ: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ ինովացիոն համագործակցության կենտրոնի» կողմից ֆինանսավորվող գրասենյակի ներքո հայ գործարարները հնարավորություն կստանան հիմնելու իրենց ձեռնարկությունների ներկայացուցչությունները: Գրասենյակը զբաղվելու է չինական շուկայում հայկական ապրանքների և ծառայությունների ներկայացմամբ և իրացմամբ, զբոսաշրջության խթանմամբ և հայ-չինական գործարար կապերի ստեղծմամբ:

Արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացում

- Ֆրանսիական «Բետրանկուր» ընկերության ներկայացուցիչների՝ նախարարության հրավերով այցի նախնական պայմանավորվածությունների ներքո «Գլորիա» և «Արմտեքս» ընկերություններին ներկայացվել են նմուշներ, բանակցություններ են ընթանում գնային առաջարկի մասով: Նախապատրաստվում է առաջարկ համատեղ արտադրություն հիմնելու մասով:
- Ֆրանսիահայ գործարարի և «Ալեքս տեքստիլ» ընկերության միջև համագործակցության արդյունքում սեպտեմբերին ստեղծվել է գործված հագուստի արտադրություն՝ 1.6 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ և 60 աշխատատեղի ստեղծմամբ:
- Ծխախոտի արտադրության ոլորտում թուրքմենական կողմի հետ «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ-ի հետ համատեղ արտադրանքի պահանջարկի ձևավորման ուղղությամբ աշխատանքներն ավարտվել են և ներկայումս ընկերության արտադրանքն արտահանվում է Թուրքմենիա:
- ՄԱԱԶԿ (UNDO) «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի մրցունակության բարձրացում արդիականացման և շուկան մատչելի դարձնելու միջոցով» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում շահառու 7 ընկերությունների կողմից 2017թ. ընթացքում կնքվել են 1.2 մլն ԱՄՆ դոլարի արտահանման պայմանագրեր ռուսական Dimanche, Smena, Fakel, Sela, Finn Flare, Slavyanka, Winnie և Trade Modus ցանցերի հետ:
- Ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկվող ԱԱՀ վճարման ժամկետների հետաձգման գործիքի ներքո հավանության է արժանացել 27 ընկերության ներդրումային ծրագրեր, որոնց շրջանակներում նախատեսվում է իրականացնել 220,6 մլրդ ՀՀ դրամի ներդրում՝ ստեղծելով շուրջ 1440 նոր աշխատատեղ: Ընդ որում՝ սարքավորումների համար նախատեսված գումարը կազմում է 48,7 մլրդ ՀՀ դրամ, իսկ հետաձգված ԱԱՀ-ի գումարը՝ 9,7 մլրդ ՀՀ դրամ:
- Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվել, կազմակերպվել և/կամ ապահովվել է արտերկրում և Հայաստանում անցկացված գործարար համաժողովների հայկական կողմի մասնակցությունը, որոնց շրջանակներում կնքվել է 11 հուշագիր, 1 էքսկլյուզիվ պայմանագիր և ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ: Ապահովվել է հայկական 93 ընկերության մասնակցություն արտերկրում կայացած 10 միջազգային ցուցահանդեսի, որոնց արդյունքում կնքվել է շուրջ 100 արտահանման պայմանագրեր՝ մոտ 5.4 մլրդ ՀՀ դրամի չափով: «ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կողմից ծրագրի շրջանակներում արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում է տրամադրվել թվով 10 կազմակերպության:
- Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող «Բնօգտագործման և բնապահպանական վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից: Օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը ընդունվել են 20.04.2017թ. N 472-Ն ՀՀ կառավարության որոշմամբ: Ընդունվել «Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառության առավելագույն սահմանաչափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 23.11.2017թ. N1492-Ն որոշումը: ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հանքարդյունաբերության ոլորտում մետաղների միջազգային գների տատանումների ազդեցությունը մեղմող միջոցառումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:
- ՌԴ-ից ալմաստի հումքի մատակարարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանդիպում է կայացել ՌԴ պետ. գանձարանի (Գոխրան) ղեկավար Ա. Յուրինի և ԱԼՌՈՍԱ-ի նախագահ Ս. Իվանովի հետ: Ձեռք են բերվել վերջնական պայմանավորվածություն:

Որակի ենթակառուցվածք

- Երևանում բացվել է «Հալալ» գրասենյակը, որի կողմից տրամադրված «Հալալ» սերտիֆիկատը գործում է Իսլամական համագործակցության կազմակերպության 57 անդամ երկրներում:
- Մշակվել և իրանական կողմի հետ համաձայնեցվել է «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԻԻՀ Ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև» փոխըմբռնման նոր հուշագրի տեքստը: Հուշագրի ստորագրման արդյունքում երկու երկրների համապատասխանության գնահատման մարմիններին հնարավորություն կտրվի համապատասխան գործունեություն իրականացնել նաև հարևան երկրում:
- Մշակվել և ԵԱՏՄ հանձնաժողովին ներկայացվել տեղական արտադրատեսակների առանձնահատկությունը սահմանող ստանդարտներ, որոնց ընդունումը հնարավորություն կտա առանց խոչընդոտների շուկայահանել և արտահանել ԵԱՏՄ անդամ երկրներ տեղական արտադրատեսակները և պաշտպանել տեղական արտադրողներին: Մասնավորապես, այդ արտադրատեսակներից են՝ հանքային ջրերը, կոնյակի սպիրտը, հայկական կոնյակը, նարինեն, բաստուրման, սուջուխը, կերակրի աղը և մածունը:
- Արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման բնագավառում հաշվետու ժամանակաշրջանում սպասարկվել և տրամադրվել են թվով 666 ԵԱՏՄ և ՀՀ տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության սերտիֆիկատներ:
- Հավատարմագրվել են 19 փորձարկման, 1 տրամաչափարկման լաբորատորիա, 10 արտադրանքի, 2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմիններ, 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին, դադարեցվել է հավատարմագրված 4 փորձարկման լաբորատորիայի և 1 արտադրանքի սերտիֆիկացման մարմնի գործունեությունը:
- Չափագիտության ազգային մարմնի կողմից իրականացվել է ՀՀ-ում և ԵԱՏՄ անդամ պետություններում, ինչպես նաև երրորդ երկրներում արտադրված և ՀՀ ներմուծված չափման միջոցների տեսակի հաստատում՝ թվով 237 հատ՝ այդ թվում 18-ը՝ փոխճանաչման միջոցով), չափման միջոցների ստուգաչափում՝ թվով 401167 հատ, չափման միջոցների վկայագրում՝ թվով 170 հատ, չափումների կատարման մեթոդիկաների չափագիտական վկայագրում՝ թվով 2 մեթոդիկա, շահագործման մեջ գտնվող չափման միջոցների փորձաքննություն՝ թվով 246287 հատ:

Արտահանման ապահովագրություն

- Ներդրվել է նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայություն, որով ամբողջովին լուծվել է արտահանողի՝ շրջանառու կապիտալի նկատմամբ պահանջարկը ինչպես արտադրության, այնպես էլ տարաժամկետ վճարման սպասման փուլերում:
- 2017թ. ընթացքում 33 տնտեսվարող սուբյեկտների համար հաստատվել են ապահովագրական սահմանաչափեր, որոնց շրջանակներում կնքվել են ընդհանուր թվով 329 ապահովագրական վկայագրեր: Ապահովագրական գումարը կազմել է շուրջ 4,534 մլն ՀՀ դրամ (աճը՝ 2,07 անգամ), հավաքագրված ապահովագրավճարը՝ շուրջ 39 մլն ՀՀ դրամ (աճը՝ 3,15 անգամ):

Կանոնակարգման դյուրացում

- «Գործարարությամբ զբաղվելը 2018» վարկանիշային զեկույցի տվյալներով Հայաստանը 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով 0,59 % աճ «Հեռավորությունը լավագույն արդյունքից» ցուցանիշով՝ գրանցելով 72,51 միավոր (առավելագույնը՝ 100):
- Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թվականին ծրագրված 49 միջոցառումներից 47-ը կատարվել են, 1-ի մասով անհրաժեշտ իրավական փոփոխությունները վերջնական լրամշակման փուլում են, 1-ը տեղափոխվել է 2018 թվականի ծրագիր, որի նախագիծը ներառում է թվով 43 միջոցառում:
- ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակը արտաքին գովազդի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրության հստակեցումն ու կատարելագործումն է:
- 26.12.2017թ. ընդունվել է ՀՀ ՏԶՆՆ-ի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվել է, որ հարկ վճարողի դիմումից հետո միասնական հաշվին առկա գումարի վերադարձը 20-օրյա ժամկետում չվճարելու դեպքում տույժերի հաշվարկը սկսվելու է ոչ թե 90, այլ 30 օր հետո:
- ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համապատասխան փաթեթը, որով կանոնակարգվում է բազմաբնակարան շենքերում և դրանց անմիջական հարևանությամբ գործող գիշերային ակումբների և զվարճանքի այլ օբյեկտների գործունեությունը:
- 14.12.2017թ. ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով ընկերության փոխկապակցված անձինք պարտավորեցվել են մինչև գործարքի կնքումը բացահայտել նաև փոխկապակցվածությանն առնչվող հանգամանքները, նախատեսվել է, որ խորհրդի անդամների ռեեստրում պետք է ներառվեն տեղեկություններ նաև ընկերության խորհրդի անդամի՝ այլ ընկերությունում զբաղեցրած պաշտոնում նրա իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, ինչպես նաև, արգելվել է բաց բաժնետիրական ընկերություններում խորհրդի նախագահի և տնօրենի (գլխավոր տնօրենի) պաշտոնների համատեղումը:
- ՀՀ ՏԶՆՆ ԹԵԺ ԳԾԻ միջոցով սպասարկվել են գործարար և ներդրումային միջավայրին առնչվող մոտ 100 մասնագիտական հարցեր: Իրականացվել է 381 իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում և տրվել է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ:

ՓՄՁ աջակցության համակարգի կատարելագործում

- «Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականցմանը» 2017 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից հատկացված 152.6 մլն ՀՀ դրամի շրջանակներում.

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից տրամադրվել է թվով 11487 **աջակցություն հետևյալ ուղղություններով՝**

- Սկսնակ գործարարների ձեռներեցությանը թվով 464 աջակցություն:

- Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ թվով 246:
- Տեղեկատվական և խորհրդատվական թվով 10337 աջակցություն:
- Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին թվով 81 վարկային երաշխավորությունների տրամադրում:
- ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ՝ ՁԵՑ գործունեության շրջանակներում, թվով 348
- Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում 11 դրամաշնորհի տրամադրում:
- Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում թվով 126 ՓՄՁ սուբյեկտների աջակցություն:

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից՝

- Տրամադրվել է թվով 67 վարկ (62 վարկառու), այդ թվում՝ վարկավորվել է թվով 46 իրավաբանական անձ և 16 անհատ ձեռնարկատեր: Վարկավորման ծավալը կազմել է շուրջ 2.80 մլրդ ՀՀ դրամ:
- Ձեռք է բերվել թվով 2 կոմբայն, թվով 38 տրակտոր և թվով 71 հարակից սարքավորումներ շուրջ 848 մլն ՀՀ դրամ գումարի չափով և ֆինանսական վարձակալությամբ է տրամադրվել թվով 24 ֆիզիկական անձի, թվով 3 գյուղական համայնքի և թվով 7 իրավաբանական անձի: Լիզինգի պայմանագրային գումարը շուրջ 678.6 մլն ՀՀ դրամ է:

Ստեղծարար և ինովացիոն բիզնեսների զարգացում

- Ստեղծվել և գործարկվել է 200 ինժեներական և բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպություններ ներառող տվյալների բազա, որի նպատակն է խթանել մասնավոր ընկերությունների, հետազոտողների և ներդրողների միջև համագործակցությունը:
- Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Ինժեներական քաղաքի ստեղծման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը:
- ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգաց-մանը» ծրագրի շրջանակում ներգրավված տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ մեկնարկել են ՀՀ-ում նորարարության զարգացման նոր ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակման, ինչպես նաև նորարարական էկոհամակարգի քարտեզագրման աշխատանքները:
- Նախարարության և «Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլ» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ուղղված Հայաստանում ընկերության հետազոտությունների և մշա-կումների կենտրոնի հիմնմանը::
- «Ֆիլիպ Մորիս Ինթերնեյշնլ» ընկերության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հայկական 5 թիմերի հետ գիտահետազոտական նախագծեր իրականացնելու վերաբերյալ՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեծ տվյալների վերլուծության, նյութաբանության և ինժեներական լուծումների ուղղություններով: Ընկերության կողմից 2017թ. նաև փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել Երևանի պետական համալսարանի և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ համատեղ կրթական, հետազոտական ծրագրերի իրականացման և գիտահետազոտական կենտրոնի հիմնման նպատակով: Ընկերությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համատեղ նախատեսում է մագիստրոսական նոր կրթական ծրագրի իրականացում:
- Նախարարության և ֆրանսիական «Շնեյդեր Էլեկտրիկ» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ուղղված ՀՀ-ում համատեղ ջանքերով գիտատեխնոլոգիական ոլորտի ծրագրերի իրագործմանը: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում 2017թ.-ից գործում է “Շնեյդեր Էլեկտրիկ”-ի Էներգիայի բաշխման և ավտոմատացման կոմպետենտության կենտրոնը:

- 2017թ. սեպտեմբերի 22-23-ը Երևանում անց է կացվել հայ-իրանական «Նանոգիտություն և տեխնոլոգիաներ» համաժողովը, որի շրջանակում ստորագրվել են 3 փոխըմբռնման հուշագրեր հայկական և իրանական ընկերությունների միջև /2-ը դեղագործության, 1-ը՝ խողովակների արտադրության ոլորտում/: Փետրվարին նախաստորագրվել, իսկ հոկտեմբերին ՀՀ և ԻԻՀ միջև ստորագրվել է գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության փոխըմբռնման հուշագիրը, որն ուղղված է գիտության և տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցությանը և նանոտեխնոլոգիաների բնագավառում փոխադարձ հետաքրքրու-թյուն ներկայացնող ուղղություններով /այդ թվում՝ նանոտեխնոլոգիաներին առնչվող կրթություն և հետազոտություններ/ փորձի փոխանակմանը:
- ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ զարգացմանը» ծրագրի շրջանակում ստեղծվել է Հայաստանում առաջին ստարտափ ակադեմիան (Startup Academy), որի նպատակն է աջակցել հայկական ստարտափ էկոհամակարգի զարգացմանը: Ծրագրին մասնակցության համար ստացվել են 42 հայտեր: Ակադեմիայի կողմից արդեն իսկ վերապատրաստվել են 16 սկսնակ թիմեր:
- Շարունակվել է ինովացիոն ոլորտի զարգացմանն ուղղված միջազգային համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության, Եվրամիության, ԱՊՀ շրջանակներում:
- Գլոբալ մրցունակության ինդեքսում Հայաստանի դիրքի բարելավման 2017-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշմամբ: Ներառված 36 միջոցառումներից 13-ը նախատեսված էր և իրականացվել է 2017 թվականի ընթացքում:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Օրենսդրական կարգավորման բարելավում

- «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: Նախագծով առաջարկվող փոփոխությունների շնորհիվ որոշ դրույթներ համապատասխանեցվում են ԵԱՏՄ ազատ/հատուկ տնտեսական գոտիների և մաքսային օրենսդրության գործող դրույթներին, այդ թվում տարածքային ազատ տնտեսական գոտիների մասով, հստակեցվում են ազատ տնտեսական գոտու գործարկման և ազատ տնտեսական գոտու սահմանագծին ներկայացվող պահանջները, հստակեցվում են շահագործողների հայտերի գնահատման, թույլտվությունների տրամադրման և դադարեցման ընթացակարգերը, ամրագրվում է շահագործողների պարտավորությունների կատարման մոնիթորինգի համակարգը, հստակեցվում են ներգրավված կողմերի իրավասությունները և պարտականությունները:
- ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթուղթը, որի հիման վրա մշակվում է համապատասխան օրենսդրական փաթեթը:
- Բանակցային փուլում են ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկ-կողմ համաձայնագրերի նախագծերը 10 երկրների հետ, այդ թվում՝ Ճապոնիայի և Կորեայի:

Ներդրումային ծրագրերի խթանման նախաձեռնություններ

- ՀՀ վարչապետի՝ մարզեր կատարած այցերի արդյունքում հավաքագրվել է շուրջ 180 ներդրումային ծրագիր, որոնցից 127-ը մշակվել և բերվել է ընդհանուր ձևաչափի: 25.12.2017թ. դրությամբ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թվով 20 ներդրումային ծրագրի համար հաստատվել է 730.0 մլն դրամ և տրամադրվել 471.0 մլն դրամի ֆինանսավորում:

- ՀՀ ՏԶՆՆ կողմից ներկայացվել է շուրջ 70 ներդրումային ծրագիր, որոնք իրականացման տարբեր փուլերում են և ունեն ֆինանսավորում: Ծրագրերի իրականացման արդյունքում 2017թ. պետք է իրականացվեր շուրջ 493 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծվեր շուրջ 7300 նոր աշխատատեղ: Տարվա արդյունքներով իրականացվել է շուրջ 506 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծվել 5200 նոր աշխատատեղ:
- Գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում 2017թ. ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն է ստացել 38 ընկերություն: Ընկերությունների ներդրումային ծրագրերով նախատեսված է մոտ 492.2 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում և մոտ 3082 նոր աշխատատեղերի ստեղծում:
- «Մեծ Քառյակի» (Big Four) անդամ «Քեյ Փի Էմ Ջի» (KPMG) հեղինակավոր խորհրդատվական ընկերության և նախարարության համատեղ ջանքերով մշակվել է ներդրումային ուղեցույց (Armenia. Great country, smart opportunities):
- Կազմակերպվել են մի շարք ներդրումային համաժողովներ (Նյու-Յորքի, Հայ-Իրանական, Հայ-Էմիրաթական, հայ-իտալական, հայ-վրացական, հայ-լիբանանյան և այլ), որոնց ընթացքում ներկայացվել են Հայաստանում ներդրումների համեմատական առավելությունները և հնարավորությունները դեպի այն շուկաներ, որոնցում Հայաստանն ունի արտոնյալ առևտրային պայմաններ:
- ՀԶՀ կողմից նախագծվել և ներդրվել է ներդրումների խթանման և ներդրողների սպասարկման «մեկ պատուհան»-ի սկզբունքով գործող համակարգը, հիմնված ֆրանսիական «Բիզնես Ֆրանս», չեխական «Չեխինվեստ» և ֆիննական «Ֆինպրո» ներդրումների խթանման գործակալությունների փորձի վրա:
- Ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից առաջարկվող արտոնությունների բազա:

Ներդրումային հիմնադրամներ

- Ներդրումային ծրագրերի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ընդլայնման նպատակով Համահայկական բանկը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, տրանսֆորմացվել է Համահայկական վարկային կազմակերպության և հիմնվել Համահայկական ներդրումային ֆոնդ՝ Համահայկական վարկային կազմակերպության վարկային ակտիվները փոխանցելով ներդրումային ֆոնդին: Նախատեսվում է տրանսֆորմացման արդյունքում ստեղծվելիք վարկային կազմակերպության 100% բաժնետոմսերի ձեռքբերում «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից՝ որպես պետություն-մասնավոր հատված համագործակցության առանձնահատուկ միջնորդ և մասնագիտացված ֆինանսական կառույց՝ արդյունքում դառնալով Համահայկական ներդրումային ֆոնդի միակ փայատեր և կառավարիչ:
- Հիմնադրվել է «Հայաստանի ներդրողների ակումբ» ներդրումային ֆոնդը, որը դիտարկում է արդյունաբերական և էներգետիկայի ոլորտի թվով 8 ծրագիր, 1 մլրդ 95 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ, իսկ իրենց կողմից նախատեսվող կատարվելիք ներդրումների ծավալը գնահատվում է 123 մլն ԱՄՆ դոլար:

Ազատ տնտեսական գոտիներ

- 2017թ. ընթացքում «Ալյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն է ստացել 6 ընկերություն, իսկ «Մերիդիան» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն է ստացել 1 ընկերություն: Վերոնշյալ ընկերությունների կողմից նախատեսվում է իրականացնել մոտ 112.4 մլն. ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծել մոտ 1285 նոր աշխատատեղ:
- Դեկտեմբերի 15-ին, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի ներկայությամբ, տրվել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) գործունեության պաշտոնական մեկնարկը:Պաշտոնական բացման արարողության ժամանակ կնքվել են մի շարք փաստաթղթեր: Մասնավորապես՝ ԱՏԳ

կազմակերպման վերաբերյալ պայմանագիր է կնքվել ՀՀ ՏԶՆՆ և «Մեղրի ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերության միջև: Համագործակցության հուշագրեր են կնքվել նաև «Մեղրի» ԱՏԳ ՓԲԸ-ի և «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի միջև, «Մեղրի» ԱՏԳ ՓԲԸ–ի և «Արման ընդ պարտնյոր» ՍՊԸ-ի («Այս Հաուս» խումբ) միջև, «Մեղրի» ԱՏԳ ՓԲԸ-ի և Հայաստանում Ռուսաստանի Դաշնության առևտրային ներկայացուցչության միջև:

- Օգոստոսի 17-ին ՀՀ ՏԶՆ նախարար Սուրեն Կարայանը և Իրանի Իսլամական Հանրապետության Նախագահի խորհրդական, Առևտրական ազատ գոտիների համադրման խորհրդի քարտուղար Աքբար Թորքանը ստորագրել են համագործակցության հուշագիր: Հուշագրի նպատակն է սահմանել Հայաստանի և Իրանի միջև ազատ տնտեսական գոտիների ոլորտում համագործակցության հիմնական ուղղությունները, մասնավորապես ապահովել «Մեղրի» ազատ տնտեսական գոտու և «Արաս» տնտեսական հատուկ գոտու առաջմղումն և սերտ փոխգործակցությունը վերջիններիս զարգացման նպատակով:
- Անդամակցել ենք Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպությանը (WFZO):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- Զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի բարելավման նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել
  - «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի փաթեթը:
  - «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.
  - «Զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացման ծրագրին, ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին և նոր ուղղությունների զարգացման երեք ենթածրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը,
  - Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:
- Հայաստանի զբոսաշրջության գրավչությունները ներկայացվել են թվով 5 միջազգային ցուցահանդեսներին, ինչպես նաև Profi.travel առցանց ցուցահանդեսին:
- Պետական աջակցություն է ցուցաբերվել 8 փառատոնների անցկացմանը:
- Գյումրիում և Մեղրիի ԱՏԳ-ում բացվել են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ՝ ՀՀ պետական աջակցությամբ Հայաստանի մարզերում արդեն գործում են 5 տեղեկատվական կենտրոններ:
- Իրականացվել են միջոցառումներ ներքին զբոսաշրջության խթանման նպատակով, մասնավորապես «Ճանաչի՛ր երկիրդ», «Բացահայտիր քեզ համար քո երկիրը», «Fun Armenia»: խորագրով արշավները:
- Ճանաչողական այցով Հայաստան են այցելել 11 երկրներից թվով 102 միջազգային հայտնի ԶԼՄ ներկայացուցիչներ, արդյունքում մինչ այսօր Հայաստանի մասին տպագրվել է 100-ից ավելի հոդված միջազգային մամուլում և ցուցադրվել թվով 15 տեսանյութ, արդյունքները շարունակական են:
- Մեկնարկել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը: Մեկնարկել է Armenia.Travel զբոսաշրջային պաշտոնական կայքը, որը Google որոնողական համակարգում գովազդային արշավի և օպտիմիզացման արդյունքում ապահովել է կայքի այցելուների կտրուկ աճ, Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվում է Facebook, Instagram, VK,

Telegram, Twitter, Google Plus սոցիալական ցանցերում հարթակներում, 3 ամսվա ընթացքում Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մասին թվային պլատֆորմենրում եղել է +60 մլն դիտում (impression)

- Նկարահանվել են Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակներ, որոնք հրապարակման առաջին 24 ժամվա ընթացքում ապահովել է մոտ 300 հազար գրառման հասանելիություն, մոտ 100 հազար դիտում և մոտ 10 հազար արձագանք (reactions, comments & shares), վերջիններս թարգմանվել և տարածվել են թիրախային շուկաներում
- Ապահովվել է մասնակցությունը ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մի շարք քննարկումներին ու նստաշրջաններին, Մետաքսի ճանապարհի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ աշխատանքային խմբի հանդիպմանը, Սանկտ Պետերբուրգում կայացած ԱՊՀ զբոսաշրջության խորհրդի հերթական նիստին, ԱՄԷ-ում կայացած VFS GLobal ընկերության կողմից կազմակերպված iConnect ամենամյա կոնֆերանսին:
- UNWTO և BSEC հետ համատեղ Մետաքսի ճանապարհի շրջանակներում մշակվել և ներկայացվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի ռազմավարությունը և մարքեթինգային քաղաքականությունը:
- Սահմանային անցման գործընթացը դյուրացվել է Չինաստանի, ԱՄԷ, Քաթարի, Ճապոնիայի, Հնդկաստանի և ՌԴ քաղաքացիների համար:
- Մշակվել են ՀՀ կառավարության և Մեքսիկական Միացյալ նահանգների կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման Հուշագրի նախագիծը և ՀՀ և ՉԺՀ միջև համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը:

ԵՄ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- 2017թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում կայացած ԵՄ Արևելյան գործընկերության գագաթաժողովի ընթացքում ստորագրվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:
- 2017թ. մեկնարկել են 3 ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրեր՝ մոտ 45 մլն եվրո ընդհանուր արժեքով:
- Ստորագրվել, հաստատվել և ուժի մեջ է մտել Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագիրը՝ 54 մլն եվրո բյուջեով:
- Ամփոփվել են «Հայաստանում ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» և Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում- II փուլ» Թվինինգ ծրագրերը:
- Հաստատվել են 15 Թայեքս հայտեր: Հանրային կառավարման բարեփոխումների ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում նախաձեռնվել են 2 նոր Թվինինգ ծրագրերի հատկորոշման աշխատանքները:
- Բանակցվել ու հաստատվել է 2018 թվականի ՍԻԳՄԱ ծրագրի տարեկան աշխատանքային ծրագիրը:
- Հաստատվել ու մեկնարկել է Սոսյու գործիքի ներքո առաջին ծրագիրը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
- Կազմակերպվել և անց են կացվել 6 միջկառավարական հանձնաժողովների նիստեր, մասնավորապես՝ Հանոյում՝ հայ-վիետնամական, Երևանում՝ հայ-տաջիկական, հայ-չեխական, հայ-ղազախական, հայ-լիտվական, Մինսկում՝ հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի նիստերը, ինչպես նաև հայ-լատվիական միջկառավարական հանձնաժողովի փորձագիտական խմբի հանդիպումը: